

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի շնորհավորանքի խոսքը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ

Հարգելի հայրենակիցներ

Անցնող տարում մեր մարզն ապրեց խաղաղ, անվտանգ, աշխատանքային որոշակի հաջողություններով նշանավորված տարի: Նկատելի ձեռքբերումներ արձանագրվեցին գյուղատնտեսության, առողջապահության, ճանապարհաշինության, քաղաքաշինության, բնապահպանության, կենսագործունեության այլ ոլորտներում, որոնք մեզ համար կայուն հիմք են ստեղծել՝ գալիք տարում ավելի եռանդով ու ոգետրությամբ հայրենաշինությանը նոր թափ հաղորդելու համար:

Թող գալիք Ամանորն ու Սուրբ Ծնունդը լույսով, սիրով ու երջանկությամբ ողողեն ձեր Աստվածաշնորհ ընտանիքները , հույսի դուռ բացեն բոլորիս առաջ: Թող Նոր տարում մեր հայրենի հողի վրա շարունակեն թագավորել միայն խաղաղությունն ու արարչագործությունը:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Ջերմ մաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան